ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ և ՍՈՑԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2019Թ. 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առողջապահություն

- Մարզային առողջապահական հաստատությունների ֆինանսավորման համար հատկացվել է՝ 2019թ.-ին 767467.9 հազ. դրամ: 2019 թվականի առաջին կիսամյակում վճարովի ծառայությունը կազմել է մոտ 33 870.0 հազ դրամ ,նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում եղել է 27 525.5 հազ.դրամ :

- 2019թ.-ին առաջին կիսամյակի ընթացքում պետական պատվերով բուժման և հետազոտման համար մարզին հատկացված 56 տեղից ուղեգրող հանձնաժողովի կողմից հանրապետության բուժհաստատություններ պետական պատվերով բուժման և հետազոտման են ուղեգրվել 17 քաղաքացի, առողջարանային վերականգնողական բուժման են ուղեգրվել 3 մեծահասակ և 4 երեխա:

- 2019 թվականին պոլիկլինիկաներում և ամբուլատորիաներում աշխատող բժիշկների աշխատավարձերը բարձրացվել են 15%-30%-ով:

- 2019 թ. ընթացքում հաշվառվել է 157 ծնունդ, 2018 թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 7-ով:

- Քաղաքացիների կողմից ներկայացված դիմում- բողոքներն ուսումնասիրվել են առողջապահության և սոցիալական ապահովության վարչության և մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի կողմից: Բարձրացված խնդիրներին տրվել են և կտրվեն համապատասխան լուծումներ:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի

առողջապահության և սոցիալական ապահովության

վարչության պետ **Վ.Ասլանյան**

02.07.2019թ.